



ՄՈՒՐԲ ԶԱԿՈՐ ՄՈՒԱԶՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵՄԿԵՂԵՅԻ

ՎԵՐԱՓՈԽՈՒՄԷՆ ԵՏԲ ԱՌԱՋԻՆ ԿՐԻԱԿԻ 20 ՕԳՈՍՏՈՍ 2023

Կիրակնօրեայ Ընթերցումներ էջ 1
Ծանուցումներ էջ 2

ԸՆԹԵՐՑՈՒՄ ԱՌԱԿՆԵՐՈՒ ԳԻՐՔԷՆ (11.30-12.4)

Արդար գործերու վարձքը կեանք է. անօրէնները վաղահասօրէն պիտի կորսուին: Երբ արդարը հագիւ կը փրկուի, ի՛նչ պիտի ըլլայ ամբարիշտին ու մեղաւորին վիճակը:

Գիտութիւն սիրողը իր սխալները կ'ընդունի...

Գիտութիւն սիրողը իր սխալները կ'ընդունի. յանդիմանութիւն ատողը անմիտ է: Լաւ մարդուն՝ Տէրը շնորհք կու տայ, մինչ կը դատապարտէ չարամիտը: Չարութիւնը մնայուն յաջողութիւն չի բերեր, մինչ արդարներու արմատը ո՛չ ոք կրնայ չարժեկ: Առաքիւնի կին մը ամուսինին համար թագ է, մինչ անպատիւ կինը անոր ոսկորները կրծող խլիբդի կը նմանի:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՐՆԹԱՅԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ԵՐԿՐՈՐԴ ՆԱՄԱԿԷՆ (6.16-7.1)

Արդարեւ մե՛նք ենք կենդանի Աստուծոյ տաճարը, ինչպէս Աստուած ինք ըսաւ.
«Անոնց մէջ պիտի բնակիմ եւ անոնց

հետ պիտի ապրիմ: Ես իրենց Աստուածը պիտի ըլլամ եւ անոնք իմ ժողովուրդս»:

Ահա թէ ինչո՛ւ Աստուած կը հրահանգէ մեզի.

«Անջատ եւ հեռու կեցէք հեթանոսներէն. պիղծ բաներու մի՛ դպչիք, եւ ես ձեզ պիտի ընդունիմ, ձեզի հայր պիտի ըլլամ եւ դուք իմ տղաքս եւ աղջիկներս պիտի ըլլաք, - կ'ըսէ ամենակալ Տէրը»:

Սիրելիներ, այս խոստումները մեզի՛ եղած են: Ուստի հեռու մնանք մարմնական եւ հոգեկան ամէն պղծութենէ, մենք մեզ կատարելապէս մաքրենք՝ Աստուծոյ երկիւղովը ապրելով:

«Անոնց մէջ պիտի բնակիմ եւ անոնց հետ պիտի ապրիմ»:

... մենք մեզ կատարելապէս մաքրենք՝ Աստուծոյ երկիւղովը ապրելով:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ (1.39-56)

Նոյն օրերուն Մարիամ ճամբայ ելլելով աճապարանքով գնաց Յուդայի լեռնային շրջանի քաղաքներէն մէկը: Հոն Զաքարիայի տունը մտնելով Եղիսաբէթի ողջոյն տուաւ: Երբ Եղիսաբէթ Մարիամի ողջոյնը լսեց, իր որովայնին մէջ երեխան շարժեցաւ եւ Եղիսաբէթ Սուրբ Հոգիով ներշնչուած՝ բարձրաճայն ըսաւ. «Կիներուն մէջ օրհնեա՛լ ես դուն եւ

«Կիներուն մէջ օրհնեա՛լ ես դուն...»

որհնեալ է գաւակը որ կը կրես որովայնիդ մէջ: Ի՞նչ երջանկութիւն, որ Տիրոջս մայրը ինծի կ'այցելէ, որովհետեւ երբ ողջոյնդ լսեցի, երեխաս ուրախութեամբ շարժեցաւ որովայնիս մէջ: Երանի՛ քեզի որ հաւատացիր, որովհետեւ Աստուծոյ կողմէ քեզի ըսուածները պիտի կատարուին»:

Մարիամ ըսաւ.

«Ինչպէ՛ս Տէրը գովաբանեմ. ահա հոգիս կ'ուրախանայ Աստուծոմով, իմ Փրկիչովս, որովհետեւ ան տեսաւ իր

աղախինին հեզութիւնը: Եւ ասկէ ետք բոլոր ազգերը երանի պիտի տան ինծի, քանի չգօրն

Աստուած ինծի համար մեծամեծ գործեր կատարեց. Սուրբ է անունը անոր: Բոլոր ժամանակներուն մէջ ողորմութեամբ ան կը նայի աստուածավախ

մարդոց վրայ: Իր գօրաւոր բազուկով ոչնչացուց հպարտները՝ իրենց բոլոր խորհուրդներով: Գահազրկեց հզօրները եւ բարձրացուց խոնարհները: Անօթիները բարիքներով լիացուց, մինչ հարուստները դատարկաձեռն արձակեց: Պաշտպան եղաւ իր ծառային՝ Իսրայէլի, որովհետեւ յաւերժական ողորմութիւն խոստացած էր մեր հայրերուն՝ Աբրահամի

եւ անոր գաւակներուն»:

Մարիամ շուրջ երեք ամիս Եղիսաբէթի մօտ մնալէ ետք վերադարձաւ իր տունը:

«... ան տեսաւ իր աղախինին հեզութիւնը»:

«... Բոլոր ժամանակներուն մէջ ողորմութեամբ ան կը նայի աստուածավախ մարդոց վրայ»:

«Գահազրկեց հզօրները եւ բարձրացուց խոնարհները»:

ԱՅԾԵԼԵԾԷ՛Ք
ԵԿԵՂԵՑԻՅԱ
ԴԻԱՍՏԵՏՐԻ ԷՁՈ
ԵՒ
ՁԵՐ ՀԱԽԱՆՈՒԹԻՒՆ
յԱՅՏԵԾԷՔ (like).
www.facebook.com/SourpHagopChurch-Montreal
ԱՅԾԵԼԵԾԷ՛Ք ԱՁԵ
Ս. ՅԱԿՈԲ
ԱՌԱՋԱՆՈՐԴԱՆԻՍ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՅ
ԿԱՅՔԷՁՈ՝
www.sourphagop.net

ՀՈԳԵԼԱՆԳԱՏԵԱՆ
ՁԵՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԵՐՈ
ԱՆԽՕՐՕՔ ԿԱՏԱՐԵԾԷՔ ԿԱՊՈՒԷԼՈՎ
ԵԿԵՂԵՑԻՅ ԳՐԱՍԵՆԵԱԿ
514 331 5445 x202 ԹԻԻՆ